

35: — Նիդ. թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՄԱԳԱՂԱԹԵՍ ՊԱՆՊԱՆԱՎ սկզբը երկու, վերջը մէկ թերթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ լաւ: — ԳԻՐ՝ թղթագիր: — ԽՈՐԱՆՔ՝ շկան: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ էջ 7, 403, 579, գեղեցիկ: — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ էջ 6, 402 (Բրիտտոս կենսաբն), էջ 578 (Գալուստ Ս. Հոգոյն): — ԺԱՄԱՆԱԿ ՌԴ (1004+551=1551): — ԳՐԻՉ՝ Մարտիրոս: — ՏԵՂԻՍ Սեբաստիա: — ՏԵՐ՝ Շիրին: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ տնս վարը: — ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ սեփականութիւն Ս. Սարգիս եկեղեցւոյ:

Մատենան է ճշդոյ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ. էջ 294. « Զստացաւ լուսազարդ գրոցս զմահդասի քահանայն Միխիթար եւ զբարի կողակիցն իւր զԳօհար մահդասին յիշեցէք ի ժամ սուրբ պատարագին եւ Աստուած ողորմի ասացէք »:

էջ 576. « Զստացաւ լուսազարդ գրոցս զՄիխիթար մահդասի քահանայն, եւ զբարի ամուսինն իւր զԳօհար մահդասին յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք »:

էջ 577. « Այլ եւ կրկին յիշեցէք առ բարերարն Աստուած զեաւջայ Ամերմէլէքն, որ յայտամի Թամզամճի է, եւ տեսաւ որ ամենայն ինչք եւ փառք անցաւոր է, եւ արար իւր բարի յիշատակ, որ հաշ կայր ի վերայ չուրահակաց քաղաքիս՝ Ամերմէլէքն եբարձ զայն՝ յայտալ քատացս, Քրիստոս Աստուած զինք եւ զիւր ծնաւդքն ազատէ ի մեղաց եւ յանօրինաց եւ զիւր տղայքն յամեն փորձանաց »:

էջ 987. « Փառք ամենասուրբ երրորդութեան... որ իւրով ամենազարեւ անկարատ բարի բնութեամբ շնորհեաց ամենաթշուառ սկարիս կարողութիւն ժուժկալութեամբ հասանել ի գլուխ տարման այսմ գեղեցկայարմար եւ խորհրդաւոր գրոցս որ կօշի Տարույ գիրք, որ ունի բովանդակ ի ծոց իւր զբոլոր ամէն ընթերցմունս, զտաւնից տէրունականաց եւ զմարդարեկից նախատեսողաց... »

Արդ ի յանգ ելեալ աւարտեցաւ քրիստոսահիմն մարգարտաշէն եւ հոգիարուղն այս տառս, եւ վերջին գիրս գրեցաւ ի Թուականութեանս Հայոց Ռ եւ աւելի Գ, ձեռամբ մոխրամած եւ մեղաք դառածեալ Մարտիրոս գրչի...: Այլ եւ յիշեցէք յաղաթս ձեր զփրոզ աստուածային օրինացն, եւ զհաւատարեմ ծառայն Աստուծոյ զեռձա Շիրին, որ զմտաւ անեալ զայն որ հրամայեալ է ի Թարթմաշաց սուրբ վկայիցն թէ երանի որ ունիցի զուսկ ի Միսիկ եւ բնտանեակ յԵրուսաղէմ: Զայս յիշեալ եւ ցանկացաւ բարի յիշատակիս եւ զնեաց գիրքս խոճա Շիրին յիւր հալալ արդենացն եւ եզ յիշատակ անձին իւրոյ եւ ծնողաց իւրոց եւ կողակիցն իւրոյ Շահգատային, եւ զաւսակացն Խաչատուրին եւ Փիրուսին եւ Սաւաբին եւ զստերացն Մայրիամին, Սուլտանին եւ Յետիկն. եւ ամենայն արեան մերձաւորաց սոցա կենդանեացն եւ հանգուցելոցն յամենայն սրբոց մասն բարութեան պարգեւեացե ամէն: Այլ եւ յիշեցէք յաղաթս ձեր զՄարտիրոսն եւ զհայրն իւր զԳրեթորոսն եւ զմայրն իւր զՄարգարեան, զի եւ սրբա մասնակից են սուրբ գրոցս: Արդ աղաչեմ զամենեանս

զդասս լուսերամիդ, որք հանդիպէք այսմ աստուածախաւս մատենան, տեսանելով կամ ընթեանելով եւ կամ գաղափարելով յիշեսցէք ի Քրիստոս Աստուած ի յայն ամենեցուն զխոճա Շիրին որ յիշատակ եզ զսուրբ գիրքս ի Սեբաստիա քաղաքիս ի դրունս սուրբ Լուսաւորչին եւ սուրբ քահանաներն եւ ամենայն սրբոց որ աստ կան հաւաքեալ...:

Քրիստոս Աստուած որ առատն է, տացէ Սեբաստիա քաղաքին քահանայիցն յերկարակեցութիւն եւ իւրեանց ննջեցելոցն զանարտում ուրախութիւն, այլ եւ խնամով պահողացն եւ լաթով բռնողաց եւ ոչ թացելով ի լեզուն...:

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր զեռձոյ Շիրինին զարեան մերձաւորքն, զԽաչատուրն, զԳաւիթն եւ զԵրեանց որդիքն, զՏիրատուրն, զՇիրին, որ ետուն վերստին նորոգել եւ կազմել զսուրբ գիրքս ի հալալ արդեանցն, աղաչեմ զձեզ ով ընթերցողք մէկ հայր մեղային մի յիշել ի տէր. եւ որ յիշէ յիշեալ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն: Կազմեցաւ եւ նորոգեցաւ գիրքս ի թվին ՌՂԳ, ձեռամբ սուտանուն Յակոբ երիցուն, զանունս ունիմ եւ զգործս ոչ:

Փառք ամենակարողին Աստուծոյ, որ է սկիզբն եւ կատարումն ամենայն բարեաց: Որ ետուր կարողութիւն սկար անձինս վերստին կազմել զքրանչելախառն մատենան, թվին Ռ. Կ. Թ. ըն. ի մայրաքաղաքին Սեբաստիա, դուն Ս. Սարգիս Եկեղեցւոյն: Արդ աղաչեմ զձեզ զընթերցողք եւ զգաղափարողք տառիս յիշել ի մաքրափայլ յաղաթս ձեր զպիտակս եւ զկղկղանս ի սարկաւազաց, զՆերսէս սեբաստացի սարկաւազս, որ միայն անուամբս եւ ոչ գործովք, եւ ասել Աստուած ողորմի տէր Վարդան քահանային, որ աւզենաց բազում աշխատանք կոկելուն զԹուլթս եւ ինձ Ներսիսի, որ առ ոտն կալով տէր Յովհաննէս կաթուղիկոսին Կիլիկիոյ, նորոգեցի ըստ կարի. ամէն: Հայր մեր որ. յեր:

Դարձեալ յիշեցէք ի սուրբ եւ յարժանաւոր յաղոթս ձեր, զԽաչատուրն եւ զորդիքն զՏիրատուրն եւ զՂուսիբն եւ զԵրեայրն զՄկրտիչն, եւ զորդիքն զՅարութիւն եւ զԱղապապն, որ լծակից եղեն ընդ միմեանս եւ կազմել ետուն իւրեանց հոգւոյն եւ ամենայն արեան մերձաւորացն եւ ծնողացն կենդանեացն եւ հանգուցելոցն ձեռամբն Շահգատուրոսի գրչիս, ի թվականիս Հայոց ՌճԹԻ ամին...:

Դարձեալ յիշատակ է սուրբ գիրքս մահտեսի Խաչատուրին, մահտեսի Մկրտիչին, եւ սոցա Բ. եղօր որդիքն լծակիցք եղեն Ղուսիբն եւ Յարութիւն նոր նորոգեցին եւ սոցա որդիքն Ալեքսանին աղայիկ տիրացու Աստուածատրին, դարձեալ յիշեցէք զՆազարէթն եւ զՅովհաննէս եւ զԳրեթորն եւ զամենայն արեան զմերձաւորսն կենդանեաց եւ հանգուցելոցն ձեռամբն Տէր Կարապետ տրուպ սուտանուն գրչիս ի Թուականիս Հայոց ՌճԽԹ ամին, որ ստացան զայս ի հալալ ընչից եւ ետուն նմա նոր նորոգել... »:

81.

Մ Ա Շ Թ Ո Յ

?

Մեծ-Ութնի՝ 18×14×14 սնտ.: — Նիւթ՝
Թուղթ: — ՏՈՂ.Ք 18: — ԳՐԻՉ, ԺԱՄԱՆԱԿ ևն՝ ան-
ծանօթ: — ՅԻՇԱՏԱԿԻ: ԳՐՈՒԹԻՒՆ՝ կը պահպն:

Մատենան է Մ-շխոյ, պահպանուոր:

82.

Մ Ա Շ Թ Ո Յ

1399.

Մեծ-Ութնի՝ 18×14×6.5 սնտ.: — Նիւթ՝
Թուղթ: — ՏՈՂ.Ք 17: — ԳՐԻՉ՝ Միսիթար: — ԺԱՄԱ-
ՆԱԿ՝ ԶԽԸ (1399): — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ կը վերաբերի
Ս. Հրեշտակապետի:

Մատենան է՝ Մ-շխոյ, կը բովանդակէ 32
կանոններ:

83.

Մ Ա Շ Թ Ո Յ

1405.

ԹՈՒՂԹ.Ք 250: — Մեծ-Ութնի՝ 17×12 սնտ.:
— ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: — ՏՈՂ.Ք 15: — Նիւթ՝ Թուղթ:
— ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՆ-
ՊԱՆԱԿ՝ մէկ մէկ թերթ առջին ու ետին: — ՀԱՆԳԱ-
ՄԱՆ.Ք ԼԱԼ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1405: — ԳՐԻՉ՝ Յովնան-
նէս: — ՏԵՂԻ՝ Կոնկոկայ: — ՅԻՇԱՏԱԿԻ ԳՐՈՒԹԻՒՆ՝
էլ 43 և 499: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ Սեփականութիւն
Ս. Նշանի:

Մատենան է Մ-շխոյ:

ՅԻՇԱՏԱԿԻ ԳՐՈՒԹԻՒՆ. Էլ 43. «Չվեր-
ջին սակաւ գրչակա և կիպոմոյ սուրբ գրոց Յով-
հաննէս անարժան և զսուտանուն քահանայադա-
շեմ, յորժամ: զկարգն կատարէք, նա յիշեալէք ի
մաքրափայլ աղաւթս ձեր և Աստուած զձեզ յիշ-
ման արժանի առնէ»:

Էլ 499. «Փառք ամենայսուրբ երրորդու-
թեան... արդ զվերջին կազմողս և զսակաւ գրչակա
Յովհաննէս սուտանուն քահանայն զի յոյժ ան-
պիտան եմ ի գործս բարիս, և թափուր և ունայն
ի յայսմ աշխարհիս, զի չեմ կացեալ ի պատուի-
րանն աստուածայինս, և չիշխեմ զտանջանս ան-
սպառ զեհնիս, որ կամ տարակոյս և զեզերեալ
ի յայսմ աշխարհիս, որ կարգայք և լուսաւորէք
ի յայսմ բանիս, թողութիւն ինդրեցէք ինձ
մեղապարտիս, և որ յիշէք զմեզ ի յայսմ տե-
ղիս նա յիշեալ լինէք ի քրիստոսի միւսանդամ
գալուստն ատենին ամէն: Կազմեցաւ Մաշթոցս
ձեզոյ Կոնկոկայս ընդ հովանեաւ սուրբ Թէոդորոսի
ի թվ. ՊԵՂԻ: Ի փառս քրիստոսի Աստուծոյ
մերում»:

84.

Մ Ա Շ Թ Ո Յ

1406.

ԹՈՒՂԹ.Ք 218: — Մեծ-Ութնի՝ 20×16 սնտ.:
— ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: — ՏՈՂ.Ք 18: — Նիւթ՝ Թուղթ:
— ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՆԱԿ՝
առջինը թերթ մը. Թուղթ Կիւրղի առ Կոստանդ: —
ՀԱՆԳԱՄԱՆ.Ք Խեղճ: — ԳՐԻՉ՝ Զուրաբի: — ԺԱՄԱՆԱԿ՝
ՊՂԵ (1406): — ԳՐԻՉ՝ Մկրտիչ: — ՏԵՂԻ՝ Տաւնիկ: —
ՅԻՇԱՏԱԿԻ ԳՐՈՒԹԻՒՆ՝ էլ 424 և 436: — ՏԵՂԵԿՈՒ-
ԹԻՒՆ՝ կը վերաբերի Ս. Նշանի:

Մատենան է Մ-շխոյ (ձեռագ):

ՅԻՇԱՏԱԿԻ ԳՐՈՒԹԻՒՆ. Էլ 424. «Յի-
շատակ է ի դուռն սուրբ Աստուածածնին որ կոչի
չուկի ժամ. չունի որ իշխանութիւն մերոց թէ
յուստարաց հանելոյ զսա ի դրանէ սուրբ Ա-
ստուածածնին: Եթէ որ յանդգնի, զընդդիմակն
կրեցէ. իսկ հնազանդեալքն աւրհիւն Աստուծոյ
և յամենայն սրբոց նորա: Արդ զրեցաւ Մաշթոցս
այս ձեռամբ Մկրտիչ կրանաւորիս. ի թվ. ՊՂԵ՝
էլ 436. «... Ըստացաւ սուրբ գրչիս որ
կոչի Մաշթոց, զահատեի Տաւնիկն յիշեցէք յա-
ղաւթս ձեր, վանս սիրոյն քրիստոսի, որ ստացաւ
զսա այս մահատեի և լուսակրան Տաւնիկ ժամկոչն
և եզ յիշատակ ի դուռն սուրբ Աստուածածնի, որ
կոչի Սեբաստիոյ քաղաքի չուկի ժամ. որ և
տէրն մեր Յիսուս քրիստոս զուր յիշատակն օր-
հնութեամբ արացէ: Այլ և կրկին աղաչեմ զի
յիշեալէք զիս և զձնաւորս իմ և զՍելվիարն և
զԹուրիսն, և զեղբարն իմ զԹորոսն, որք փո-
խեալք են առ քրիստոս, և զամենայն արեան մեր-
ձաւորքն իմ, զկենդանիքն և զհանգուցեալք յի-
շեցէք և Աստուած ողորմի ասացէք, և որ յիշէ
և ողորմի տայ, քրիստոս իւրեանն ողորմեսցի
ամէն: Հայր մեր Յիշատակս եղաւ. թվ. ՌՃԵ.
Մարտի ԺԶ»:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. Մատենան է ձեռագ
Մաշթոց, ուր կը պարունակուին կանոնք խաչ օր-
հնելոյ, մկրտութիւն առնելոյ, ջուր օրհնելոյ,
ոտնալուսելին, ժամատուն օրհնելոյ, զժողովուրդ
օրհնելոյ, աւագան օրհնելոյ, եկեղեցի օրհնելոյ,
ապաշխարող առնելոյ, խունի օրհնելոյ, պղծեալ
տաճարի, հանգերձ օրհնելոյ, սկի և մողգմա օր-
հնելոյ, նոր դուռն օրհնելոյ, որ պիղծ ինչ եղեալ,
լարմտիս օրհնելոյ, զնկարեալ եկեղեցի օրհնելոյ.
և զանագան տօնական զանձեր: Սեփականութիւն
Ս. Նշանի Սեբաստիայ:

85.

Մ Ա Շ Թ Ո Յ

1474.

ԹՈՒՂԹ.Ք 142: — Մեծ-Ութնի՝ 18×14 սնտ.:
— ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: — ՏՈՂ.Ք 19: — Նիւթ՝ Թուղթ:
— ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք Բաւական լաւ:
— ԳՐԻՉ՝ Զուրաբի: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԶԻԳ (1474): — ԳՐԻՉ՝
Նրեմիս: — ՏԵՂԻ՝ Զորա: — ՏԵՂԻ՝ Կոնկոկայ գիւղ: —

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ՛ տես վարը: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵ՛
կը վերաբերի Ս. Սարգսի:

Մատենան է Մաշինոյ (ձեռագր):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ՛. «Գրեցաւ սայ ի
Թուիս Հայոց ՋԻԳ. ի փառս Քրիստոսի Աստուծոյ
մերոյ: Յիշեալիք ի Քրիստոս զստացողն սորա Զու-
րան եւ կենակիցն իւր Չիման, որ ստացաւ զսա ի
հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր եւ ծնողաց
իւրոց, զգեռաբուսիկ որդին իւր զՈսկետունկն, եւ
զին գերեմիս գծադր եւ զծնողս իմ աղաչեմ յիշել
ի Տէր եւ Աստուած զձեզ յիշէ, զհայր իւր զԹա-
թոս, զմայր իւր զՓշաշայ Մելիքն, եւ զբոյրն իւր
սարգ Մելիքն, եւ զդուստրն իւր զՓաշայ Մելիքն,
եւ զհանգուցեալսն իւր ի Քրիստոս ամէն. եւ եղի
զսայ ի կոնթերն ի գեաւղն, ի դուռն սուրբ
Սարգսի գաւրավարին, եւ ով որ հակառակ կայ
այս սուրբ Մաշինոցիս, ծախելով եւն:

Գարձեալ յիշեցէք ի Քրիստոս Զամիրմէան,
եւ զկողակիցն իւր զԹուրվանտան եւ զորդին իւր
զՆուպատուն եւ զհայրն իւր զԱմիրճիկան եւ լի
սրտի Աստուած ողորմի ասացէք որ վերստին նո-
րոգել երես գուրբ Մաշինոցս ի թվ. ՌԻԵ: Յի-
շեցէք ի Քրիստոս զկազմող սորա զԱկոր արեղա՞:

86.

Մ Ա Շ Թ Ո Ց

1476.

ԹՈՒՂԹ.Ք 219: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵ՛ 19X14 մնտ.:
— ԳՐՈՒԹԻՒՆՆԵ՛ միասին: — ՏՈՂ.Ք 18: — ՆԻՒԹ՝
թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ խեղճ:
— ԺԱՄԱՆԱԿ՝ ՔԻՅ (1476): — ԳՐԻՉ՝ Սարգիս քահա-
նայ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ՛ տես վարը:

Մատենան է Մաշինոյ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ՛. «Աստուած
ողորմի Պաղտատ մամային հոգոյն տնտեսին, որ
յամենայն ժամ կու կերակրէր. Աստուած զիւր
մեղք թողու՞ն:

Բ. «Յիշատակ է Մաշինոցս Սերամիր Պոյճուն
եւ իւր կոնջն Մանաւղին, եւ որդուն Գանիէլ երի-
ցուն եւ Թուրն Աստուածատուր սարկաւազին եւ
ամենայն արեան մերձաւորացն, ստացաւ զգիրքս ի
հալալ արդեանցն առեալ Ի. Ը. մառդիլ շոռիլ եւ
եղ յիշատակ ի գիւղն որ կոչի Խառիկոնի բերդն:

Գ. «Փառք համազոյ... արդ գրեցաւ հար-
կաւոր եւ մեղսայքաւիչ տառս այս ձեռամբ ան-
պիտան եւ անարհեստ գրչի Սարգիս սուտանուն
քահանայի, ի թվին Հայոց ՋԻԵ, ի դուռն սուրբ
Կարապետիս եւ այլ սրբոցս ողբ ասո կան հաւա-
քեալ եւ ի հայրութեանս մերում Տէր Կարապետի
եւ այլ հնգեատասն հոգեւոր» (Երկու թուղթի գործած
է հոս):

Դ. «Յիշատակ է Մաշինոցս Թորքնու պզտի
Նորհատին եւ իւր կողակիցն Շալուբին եւ որդւոյ
նորա Մամէլին, եւ իւր կողակիցն, եւ Թուրանին
եւ որդւոյ նորա Շամշատինին, Սաւաուճանին, եւ
իւր կողակիցն, Շահաուղին եւ որդւոյ նորա Ա-
սուածատրին եւ եղբաւրն նորա Սարգսին եւ

Նաւաւազին, եւ որդւոյ նորա Պապաճանին եւ
Հարապետին: Վերստին նորոգեն սուրբ Մաշինոցս
իւրեանց հալալ արդեալն. ամէն՞:

87.

Մ Ա Շ Թ Ո Ց

1593.

ԹՈՒՂԹ.Ք 86: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵ՛ 18X14 մնտ.:
— ԳՐՈՒԹԻՒՆՆԵ՛ միասին: — ՏՈՂ.Ք 17: — ՆԻՒԹ՝
թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՆ-
ՊԱՆԱԿ առջեւ երկու թերթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ խեղճ:
— ԳՐԻՉ՝ բոլորգիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԻՅ (1593): — ԳՐԻՉ՝
Սարգսի: — ՏԵՂԻ՝ Տանծիկավանք:

Մատենան է «Մաշինոյ յեւնադրութեան»
որուն 1—44 էջերը կը գրաւէ «սահմադրու-
թիւն դաստիարակութեան նորձնեալ յանկանց հր-
էրէլոց ի սարխմաւ Կահաւայութեան իւրոց հարի-
ւորս եւ պիտանիս, որբերել Տէր Աստուծէ սէնեոց
եղիւնորսէ սուցեալ, գրուածք մը, որուն մէջ,
չորս գլուխներով. — իւրաքանչիւրը 7—9՝ հա-
տուածներու ստորաբաժնուած — կը բացա-
տրուի թէ եկեղեցականութեան կոչուած ըն-
ծայացուն իր մանուկ հասակէն սկսելով քրիս-
տոնեական ինչպիսի խնամեալ եւ մաքուր դաս-
տիարակութիւն մը պէտք է ընդունած ըլլայ:
— Յետոյ կը դուրսին ձեռնադրութեան կա-
նոնները:

Բ. Նախ կը դուրսի քահանայական կոչման
կանոնը, որ համանման է այժմեանին, միայն
հերձուած ողներուն եւ գեղափառներուն անուն-
ները չեն նշանակուած, թէեւ յանուանէ յիշի-
լու հրահանգը կայ. 45—58:

Գ. Սիւղթն սարխմանց կէտիկոց, որ է
սահմադրութեան ձեւը, եւ սիւնեալն ըստ իւր-
տանիքի կարգի. յարեւմտն այժմեանին: Փքը
սարկաւազութիւն ալ այս գլխոյն մէջ է.
58—94:

Դ. Կանոն Սարխմայի յեւնադրութեան
ի վերջն կ'ըսէ Սարկաւազաց համար. «Եւ արիա-
ւար կացցեն յեկեղեցին աւուրս Ի. եւ ծանոցեն
զինքեանս թէ որոյ շնորհի ընդունակ եղեն».
94—123:

Ե. Կանոն յեւնադրութեան Կահաւայի. 123—
169:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ՛. էջ 159—172.
«Փառք ամենասուրբ երրորդութեան... Արդ գրե-
ցաւ ձեռնադրութեան սուրբ գիրքս ի թուականիս
Հայոց ՌԻԵ, ձեռամբ բազմամեղ եւ անիմաստ
գրչիս Մարգարէ իրիցոյս. յիշատակ ինձ եւ ծնաւ-
ղաց իմոց, հաւրս իմոյ Միրտիչին եւ մաւրս իմոյ
Ոսկեհատին, որ փոխեցան առ Քրիստոս, եւ եղ-

բարց իմոց Առաքելին եւ Տաւնապետին, Ա․․ Ղպաթին, եւ Թորոսին, Պետրոսին եւ Ամիրվարդին, եւ այլ ամենայն արեան մերձաւորաց իմոց, կենդանեաց եւ հանգուցելոց, եւ կողակցին իմոց Նար Մելիքին եւ որդւոյ իմոց Սահակին, եւ դեռահասակ եղբարորդւոյն իմոց Աւագ Սարկուազին, եւ այլ ամենայն ընտանեաց իմոց․ ամէն։ Ես, նուստ եւ տառապեալ ոգի, ծոյլս եւ պղերգս, հօրս եւ մոխիրս, Տէր Մարգարէս, որ անուամբս եմ քահանայ, եւ գործովս ունայն, գրեցի եւ ծաղկեցի եւ կազմեցի եւ եղի յիշատակ յաւիտենից ի վանս որ կոչի Տանձիկավանք,․․․ սուրբ առաքելոյն եւ սուրբ Նշանին, եւ սուրբ Կարապետին, եւ սուրբ Սարգսին, եւ ինգրակատարին եւ այլ ամենայն սրբոց, սրբ աստ կան հաւաքեալ, եւ ի յառաջնորդութեան Տէր Գալուստ արհիեպիսկոպոսին․․․» եւն։

88.

Մ Ա Շ Թ Ո Ց

1590.

ԹՈՒՂԹՔ 96: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆ 20X15 սնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆՆ միասին: — ՆԻՒԹ ԹՈՂԹ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ լաւ: — ԳԻՐ բոլորագիր: — ԺԱՄԱՆԱԿ ՌԹ (1590): — ԳՐԻՉ ՏԷՐ ԳՐԻՉՈՐ: — ՏԷՐ ՆՈՐԻՃԱՆ: — ԿԱԶՄՈՂ ՇԱՄՈՐ: — ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆՔ տնս վարք:

Մատենան է Մ․․․, կան միայն քանի մը կանոններ:

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆՔ. էջ 152. «Արդ արհեստէլ է Աստուած եւ համայնոց սուրբ երբորդութիւն, որ զնացաք ի Սերաստիայ Գ․ ար ի Աստուածամայր կեցանք»:

էջ 157. «Յիշատակ է Մաշթոցս մահդասի Նուրիճանին, եւ իւր կողակցին մաղտեսի Մուլքէի հոգւոյն, որոյ յիշատակն արհեստէլեամբ եղեցի, ի ձեռն Տէր Գրիգորին ի թվին Ռ․ԼԹ․ Յունիոնի ժ․Զ․ եղեւ ամէն»:

էջ 187. «Կողմեցաւ Մաշթոցս ի Սերաստիա ի թվին Ռ․ՃԴ․ ձեռամբն մեղապարտ Շամլլուիս, աղաչեմ զձեզ որ յիշէք ի բարին: Յորժամ զհիւանդըս բժշկես, Շամլու գրիշս յիշատակես, յաւժար սրտիւ ողորմի կամ Հայր մեր որ յերկինս ասես»:

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ

(Շարտաւանկելի)



ՀՅՅԵՐԻՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ Ի ՍՈՓԻՆ

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

1629.

ԹՈՒՂԹՔ 304 (էջ 608): — ՄԵԾՈՒԹԻՒՆՆ 13X10: — ԳՐՈՒԹԻՒՆՆ միասին: — ՆԻՒԹ մագաղաթեան: — ՏՈՂՔ 27: — ԿԱԶՄՔ կաշեկազմ (նորագոյն ու վերջին ստացչին կողմանէ կազմուած ու հինը ջնջուած): — ՀԱՆԳԱՄԱՆՔ շատ լաւ: — ԳԻՐ հին բոլորագիր: — ԶԱՐԳԱԳՐՈՒՔ սիրուն: — ԽՈՐԱԳԻՐՔ կարմիր թանաքով: — ԽՈՐԱՆՔ նուրբ: — ԼՈՒՍԱՆՆՆԱՅԻՆ ընտիր, տեղ տեղ սրբոց պատկերներ ալ կան: — ՆԿԱՐՔ 8: — ԺԱՄԱՆԱԿ ՌՉԸ (1078+551=1629, Յունուար 21): — ԳՐԻՉ Մընայէ: — ՏԵՂԻ, Կոստանդինուպոլիս ի դուռն Ս. Սարգսի: — ՏԷՐ անունը ընջուած: — ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆՔ էջ 54, 510, 604-606: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆՔ Սեպահանութիւն Հոանդ Մինաս Նալսոմանի ի Սոփիա Պուլկարիոյ:

Մատենան է Շարակնոց:

Կը սկսի «Երգեցէք որդիք Սիրովնի երգ նոր» ով ու կ'աւարտի գրիչին յիշատակարանովը (էջ 510): Էջ 511 էն մինչեւ էջ 604 կը բովանդակէ խրատականներ՝ թէ ինչ շարական պիտի երգեցուի ամէն մէկ տօնին օրը, ինչ կարգաւ պիտի ըսուին նոյն աւուր աղօթքները, քարոզներն ու սաղմոսները: Կը տրուին նաև զանազան տեղեկութիւններ այլ եւ այլ օրերու եւ տօներու աւուր պատշաճի վերաբերեալ: Այս խրատականներու մասը հաւանօրէն երկրորդ գրիչի մը կը վերաբերի. թէ՛ գրի տարբերութիւնը եւ թէ՛ այն պարագան որ եթէ առաջին գրիչն ըլլար՝ անչուչտ առաջին գրիչն իւր յիշատակագրութիւնը այս մասէն վերջը, որ է ըսել՝ ամբողջ գրութեան աւարտումէն ետքն պիտի գրէր, եւ կամ եթէ զանազան ժամանակներու մէջ գրած ըլլար՝ անպատճառ յիշատակարան մ'ալ ամէնէն վերջը պիտի գնէր՝ կրուան են մեր հաւաստումին:

Յիշատակագրութիւնէ. էջ 510 (Բուն գրչէն): «Փառք ամենասուրբ Երրորդութեան. հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ յաւիտեանս ամէն: Գրեցաւ շարակնոցս ի լաւ եւ յընտիր արքինակէ: Զի արքինակն գրեալ էր այսպէս թվականն ԶԽԴ. թագաւորութեանս Հայոց Հեթմոյ որդւոյ արքայի Լեւոնի. ի մայրաքաղաքիս Սիսայ ի դուռն սուրբ Նըչանիս. եւ մերս գրեցաւ թվին Ռ․ՉԸ Յունվարի ԻԱ ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպոլիս ի դուռն սուրբ